հայ տպագրիչները առաջ տարել իրենց հայրենանվեր գործը՝ հայրենիքի համար բազմացնելով մեսրոպատառ գրքեր։ Սողոմոնի այդ հիշատակարանը տառապած, ազնիվ սրտի մի պոռթկում է։

Ոսկանի մասին հիշատակարանը մի շարք կարևոր տեղեկություններ է տալիս, ինչպես, օրինակ՝ նրա մահվան ամիսն ու օրը[10] (1674-ի փետրվարի 4), ապա այն, որ Ոսկանը մեծ պարտքեր է ունեցել ոչ միայն Մարսելում, այլև Ամստերդամում, որով մեկ անգամ ևս հաստատվում է, որ Ամստերդամից Ոսկանի մեկնելու պատճառը պարտքատերերի հալածանքն է եղել և նորից է հերքվում այդ ուղղությամբ արված այլ կարգի ենթադրությունները (այն պնդումը, թե Ոսկանի Հոլանդիայից դուրս գալու պատճառն այն է, որ նա չէր ուզում ոչ կաթոլիկական կամ հերետիկոսական երկրում գրքեր տպագրել[11])։ Հիշատակարանում հետաքրքիր են նաև Ոսկանի հասցեին ասված մեծարանքի խոսքերը, որից երևում է, թե ժամանակին որքան մեծ է եղել նշանավոր հայ տպագրիչի համարումը։ Ստորև բերում ենք այդ հետաքրքիր հիշատակարանից հատվածներ.

«Արդ՝ որք հանդիպիք հոգենուագ մատենիս այս ընթեռնլով կամ օրինակելով, յիշեսջիք յաղօթս ձեր. զբազմաշխատ հոգևոր մշակն Քրիստոսի։ և յոգներախտ մատուցակն գիտութեան ի ձեռն բազմութեանց գրեանց ցեղին հայկազնեաց. զՏէր Ոսկան Աստուածաբան վարդապետն և զերկրորդ թարգմանիչն. որ յսկզբան առաջին տետրն սաղմոսին հանգեաւ ի Քրիստոս ի հազար հարիւր քսան և երեք թուին յամսեանն փետրվարի. Դ։ որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. և Տէր Քրիստոս ի հոգիս նորին գթասցի. և մեզ մեղաւորացս ողորմեսցի։ ընդ տեառնս իմում յիշեսջիք և ի Քրիստոս հանգուցեալ զեղբարսս սորին, զյովանէսն։ և զմիրզախանն։ և զքոյր սոցին մայրն իմ զՀռիփսիմէն։ և կենդանի զեղբայր սոցին զբարեպաշտ և զքրիստոսասէր պարոն աւետիսն պատճառն հաստատութեան գործարանիս։ Ընդ սոցին յիշեսջիք և ըզհայրն իմ, զպօղոս աստուածաբան վարդապետն։ Հուսկ յետին և զիս զորուպս ամենից նուաստից զսաղօմոն պաշտօնատարս. որ զկնի մահուան քեռոյն իմոյ հարազատի Տեառն Ոսկանայ վարդապետի. յոգունքք վշտիւք և բազմօք չարչարանօք ածի զսա աւարտ. և դեռևս կայ կիսակատար սաղմոսն առենի[12]։ Զի հասեալք էաք յութերորդ տետրն բարձաւ ի կենաց ասափ ծերունին իմ պատուական և շիջաւ ճրագ գործարանիս լուսաւորութեան. և բարձաւ յոյս իմ ատէն պարտույն և ցաւոցն ազատութեան միանգամայն և անձանց մերոց կեցութեան։ և հարկ ի վերայ իմ կայ դատաստանաւ առ ի կատարել բազմօք ծախիւք զառեննին զորոյ զպատճառն ամին իրի. և զպատմութիւն մահուան վարդապետին և զկենդանածիր կտակ նորին ընթեռնլոց էք յայլում վայրում զամենայնն յամենայնի։ Ի յուշ ածարութիւն հոգէկիր վաստակոց և գործոց նորին և իւրն յարաժամ անմոռանալի, առ ի հատուցումն երախտեաց նորին ձեզ որդւոցդ իւրոյ հոգևորի. և մի՛ մնալ պարտական երախտեացն նորին հատուցման. ըստ կնքեցելոյ բանին սորոյն ներսիսի։ ...Բայց և այս ինչ հարկաւոր է պատշաճ իմն թուի ինձ ծանուցանել ձեզ տեարցդ իմոց և հարցդ և եղբարցդ. և ըստ իս պաշտօնատարաց անձանց. ի վերայ հիքոյս հասեալ վշտացն և հարուածոցն. զորս կրեցի զկնի մահուան վարդապետին աստ ի Մարսիլիայ. և կրեմ տակաւին։ Քանզի հաւն իմ հեղահօգի. զկնի վախճանին իւրոյ եթող վասն իմ զցաւս անբուժելիս. և զփորձութիւնս անելս։ զբարդութիւն պարտուցն ասեմ աւելի քան զքսան հազար մառչիլաց. թէ աստ ի Մարսիլիայ. և թէ յամստէրդամ և յայլ ուրեք։ և զգումարումն պարտատիրացն։ և զժողովումն ի մի վայր հնից և նորոց թշնամեաց և բնաւից նեղչաց ամենից կողմանց. զորս անկարելի է զամենայնն ընդ գրով արկանել։ վասն զի ընդ մատենիս լուսաւոր հոգւոյն ի գերեզման, մատնեցայ ես

10 Ոսկանի կենսագիրները սովորաբար գրում են, որ նա մահացել է 1674-ի սկզբներին (Գ. Զ ա ր բ հ ա ն ա լ յ ա ն, Պատմություն հայկական տպագրության, էջ 117, Լեո, Հայկական տպագրություն, հ. 1, էջ 182, Լեոնյան, նշվ. աշխատութ., էջ 110)։

11 Տե՛ս օրինակ, Զ ա ր բ հ ա ն ա լ յ ա ն, նշվ. աշխատութ., էջ 112 կամ՝ «Բազմավեպ», 1891, հունիս, էջ 163։

12 Խոսքը անավարտ ժամագրքի մասին է։